

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ
ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ**

- Դիմում-հայտ:
- Անձնագրի և սոցիալական ապահովության քարտի պատճենները:
- Հաճախորդի հետ բնակվող (խնամակալության տակ գտնվող) անձանց անձնագրերի պատճենները:
- Տեղեկանք գրանցման (հաշվառման) և ընտանիքի կազմի վերաբերյալ՝ տրված իրավասու մարմնի (տեղական ինքնակառավարման մարմին, ԲՇՏ, Համատիրություն, Լիազոր ներկայացուցիչ և այլն) կողմից,
- Ամուսնության վկայականի պատճեն (ամուսնալուծված կամ ամուրի լինելու դեպքում՝ համապատասխանաբար ամուսնալուծության կամ մահվան վկայականների պատճենները):
- Տեղեկատվություն (պետ. ռեզիստրից, դեպոզիտարիայից, ռեեստրավարից) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում 10% և ավելի մասնակցության վերաբերյալ:
- Բանկերում ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին 6 ամսվա շրջանառության և մնացորդի վերաբերյալ:
- Տեղեկանք աշխատավայրից, որտեղ պետք է նշվի զբաղեցրած պաշտոնը և ամսեկան աշխատավարձի չափը և/կամ հայտարարություն եկամուտների վերաբերյալ (երբ Հաճախորդը և (կամ) երաշխավորը չեն աշխատում),
- Տեղեկություններ ընտանիքի անդամների եկամուտների վերաբերյալ,
- Վերանորոգվող անշարժ գույքի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր:
- Վերանորոգման աշխատանքների իրականացման ծախսերի նախահաշիվ:
- Այն դեպքում երբ որպես երաշխավոր հանդես է գալիս իրավաբանական անձ, ապա իրավաբանական անձին վերաբերվող փաստաթղթերը՝ հիմնադիր փաստաթուղթը (կանոնադրություն)՝ հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ, Պետական ռեզիստրի գրանցման վկայական (իր ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը), ֆինանսական հաշվետվությունները և այլն:
- Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է վարկային կազմակերպություն:

Հաճախորդը պետք է ներկայացնի նշված փաստաթղթերի բնօրինակները կամ սահմանված կարգով վավերացված պատճենները:

